Հավելված N422
էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի.
2019 թ. հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) առևտրի և ինտեգրացիայի վարչության (այսուհետ՝ Վարչություն) սակագնային և ոչ սակագնային կարգավորման Բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետի (ծածկագիրը՝ 23-32.11-Մ2-7)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր մասնագետը կամ Բաժնի ավագ մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իրականացնում է սակագնային և ոչ սակագնային կարգավորմանն ուղղված միջոցառումների մշակման և Եվրասիական տնտեսական միության չափանիշներին համապատասխանեցման աշխատանքները,
2. իրականացնում է ՀՀ տնտեսական զարգացման խնդիրներով պայմանավորված՝ առանձին ապրանքների արտահանման արգելման կամ քանակական սահմանափակումների քաղաքականության մշակման աշխատանքները,
3. իրականացնում է ազատ առևտրի մասին համաձայնագրերի, ինչպես նաև ԵԱՏՄ անդամակցության պայմանագրից բխող պարտավորությունների շրջանակներում մի շարք ապրանքատեսակների մասով արտոնյալ դրույքաչափերի կիրառման ընթացակարգերի մշակման աշխատանքները,
4. իրականացնում է սակագնային և ոչ սակագնային կարգավորման ոլորտում «պետություն-մասնավոր հատված» համագործակցության միջոցառումների մշակման և իրականացման աշխատանքները,
5. իրականացնում է ՀՀ համար զգայուն, ինչպես նաև արտահանման մեծ ներուժ ունեցող ապրանքների ցանկերի մշակման աշխատանքները՝ ելնելով երրորդ երկրների շուկաների առանձնահատկություններից,
6. իրականացնում է երրորդ երկրներից ՀՀ-ից արտահանման և երրորդ երկրներից ՀՀ ներմուծման քվոտավորման մեխանիզմի ներդրման աշխատանքները,

7. իրականացնում է սակագնային, ոչ սակագնային կարգավորման ոլորտում առանձին տեսակի ապրանքների ցանկի և վերջինիս ուղղությամբ մաքսատուրքի դրույքաչափերի կամ ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման վերաբերյալ համապատասխան իրավական ակտերի մշակման և ԵԱՏՄ անդամ պետությունների հետ բանակցությունների վարման աշխատանքները,
8. Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում իրականացնում է ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման քաղաքականությունը
9. իրականացնում է ապրանքների ծագման երկրի որոշման միասնական քաղաքականության հետ կապված աշխատանքները:

Իրավունքները՝

- Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորմանն ուղղված միջոցառումների մշակման և Եվրասիական տնտեսական միության չափանիշներին համապատասխանեցման աշխատանքների հետ կապված այլ մարմիններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն,
- ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր շահագրգիռ մարմիններից ՀՀ տնտեսական զարգացման խնդիրներով պայմանավորված՝ առանձին ապրանքների արտահանման և ներմուծման արգելման կամ քանակական սահմանափակումների ուղղությամբ քաղաքականության մշակման հետ կապված,
- մասնակցել մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորմանն ուղղված՝ որոշ ապրանքատեսակների մասով մաքսատուրքերի բարձրացման, նվազեցման կամ զրոյականացման, ինչպես նաև որոշ ապրանքատեսակների մասով դասակարգման հետ կապված միջոցառումների իրականացման, թույլտվությունների և լիցենզիաների տրամադրման ընթացակարգերի մշակման և դրանցից բխող միջոցառումների իրականացման հետ կապված շահագրգիռ մարմինների մասնագետների և փորձագետների հետ անցկացվող խորհրդակցություններին և քննարկումներին՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում,
- մասնակցել միասնական շուկայի ձևավորման աշխատանքների իրականացման հետ կապված համապատասխան պետական կառավարման մարմինների հետ անցկացվող քննարկումներին Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում:

Պարտականությունները՝

- ներկայացնել առաջարկություններ համապատասխան մարմիններից ստացված անհրաժեշտ հիմնավորումների, կարծիքների և տեղեկատվության հիման վրա՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության ուղղությունների վերաբերյալ,
- ուսումնասիրել և կատարել վերլուծություններ մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորմանն ուղղված որոշ ապրանքատեսակների մասով

մաքսատուրքերի բարձրացման, նվազեցման կամ զրոյականացման, ինչպես նաև որոշ ապրանքատեսակների մասով դասակարգման հետ կապված միջոցառումների իրականացման, թույլտվությունների և լիցենզիաների տրամադրման ընթացակարգերի մշակման վերաբերյալ ապրանքների արտադրության, ներմուծման և արտահանման ծավալների մասով՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում,

- ներկայացնել առաջարկություններ՝ արտաքին շուկաների ուսումնասիրման և տեղական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության, ինչպես նաև արտահանման խթանման վերաբերյալ,
- ազատ առևտրի մասին համաձայնագրերի, ինչպես նաև ԵԱՏՄ անդամակցության պայմանագրից բխող պարտավորությունների շրջանակներում *վերլուծել* համապատասխան շուկաները՝ հայրենական ապրանքների մրցունակության բարձրացման ուղղությամբ,
- *սկսուգել* և վերլուծել Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորմանն ուղղված միջոցառումների մշակման և Եվրասիական տնտեսական միության չափանիշներին համապատասխանեցման վերաբերյալ շահագրգիռ մարմիններից ու կազմակերպություններից ստացված տեղեկատվությունը և ներկայացնել առաջարկություններ:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Ժամանակի կառավարում
2. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
3. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: